Հունիսի 11- մեկօրյա գործադուլի օր

07.06.2012 00:00

"Հարգելի փաստաբաններ, 2012 հունիսի 11-ը հայտարարվում է փաստաբանների մեկ օրյա գործադուլի օր: Այդ օրը փաստաբաններով հավաքվելու ենք դահլիճում /տեղը և ժամը լրացուցիչ կհայտնենք/ և լրագրողների ներկայությամբ ներկայացնելու ենք մեր պահանջները: Խնդրում ենք կից ուղարկվող տեքստին ծանոթանալ և եթե միանում եք հետադարձ նամակով տեղեկացնել այդ մասին: Տեղեկացնում ենք, որ արդեն մոտ 100 փաստաբաններ միացել են այս հայտարարությանը: Միաժամանակ նկատի ունենալով, որ 2012թ. հունիսի 11-ի միջոցառման ժամանակ ներկայացվելու են դատական համակարգում առկա բազմաթիվ խախտումներ և դրանց լուծման ուղիները փաստաբանների դպրոցի կողմից այն համարվելու է վերապատրաստման դասընթացի օր: Փաստաբանների համար սա հիմք է, որպեսզի հարգելի համարվի դատական նիստին բացակայությունը, ինչի կապակցությամբ կարող է տրամադրվել համապատասխան տեղեկանք: Ակնկալում ենք Ձեր ակտիվ մասնակցությունը:

Ձեր պատասխանը սպասում ենք մինչև 05.06.2012թ. ժամը 15.00:

Փաստաբանների նախաձեռնող խումբ"

Բեռնել տեքստը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })